

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՈՅՈՍԱ ՄԱԿՆՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՄԱԾՁԲ-07-17/22**

p. երևան

« 7 » օգոստոսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տոյոտա Երևան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Գրգարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Տոյոտա մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3 900 000 (երեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը

կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու

մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎՎԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մովսես Խորենացու 3
ՀՎՀՀ 02647057
Հ/Կ 900013202016, Հ/Կ 900013574018
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի
աշխատակազմի ղեկավար՝


ԿԱՏԱՐՈՂ



«Տոյոտա Երևան» ՍՊԸ
Ք.Երևան, Բայրոն 3
ՀՎՀՀ 01557589
Հ/Կ 1570003667300100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
«Տոյոտա Երևան» ՍՊԸ տնօրեն՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ


(ստորագրություն) Կ.Տ

Վ.ԳՂՐԱՐՅԱՆ


(ստորագրություն) Կ.Տ




ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆԱՌԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

		Ծառայության				
Ձ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չ/Մ	առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն և ժամկետը
1	5011170/3	<p>Տոյոտա մակիճի ավտոմեքենաների ընթացիկ նորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ:</p> <p>Ծառայությունների մատուցումը իրականացվում է ըստ կից հավելված 1.1-ով հաստատված ծառայությունների մատուցման միավորի գների:</p> <p>Կատարողը պարտավոր է Պատվիրատուի պահանջով տրամադրել տեղեկանք՝ Պատվիրատուի տրանսպորտային միջոցը Կատարողի տեխ. սպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:</p> <p>Կատարողը պարտավոր է SU-2 ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա երաշխավորված այլ արտադրության պահեստամասեր և քայլոցեր՝ ինչպես նաև Պատվիրատուի պահանջով տրամադրել դրանց ձեռքբերումը կամ ներմուծումը հավանադրելի փաստաթղթի պատճենով:</p> <p>Ավտոքարշակի առկայություն 3.5 տոննա նվազագույն բեռնատարողությամբ, որը կանցը առանալուց հետո առնվազն 30 րոպեի ընթացքում կարող է զուրս գալ տեխնիկական Ավտոմեքենայի անհրաժեշտ նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուի նշված ժամկետում և պահանջով ընդունել ավտոմեքենան SU կայան և անմիջապես իրականացնել պիտուորչման, անհրաժեշտ քանդում, սպամոնտաժման, զննման և գնահատման աշխատանքներ:</p> <p>Յուրաքանչյուր ավտոմեքենայի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով կատարողի կողմից կազմվում, կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:</p>	դրամ	3 900 000	1	Պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև հունվարի 9-ից փետրվարի ծագած հարաբերությունների վրա, մինչև 2017թ. դեկտեմբերի 15-ը: <p>Ծառայությունները մատուցվում են պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա, այդ պահանջը ներկայացվելու օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում:</p> <p>Առանձին դեպքերում պատվիրատուի կողմից կարող են սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետներ:</p>

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
 ք. Երևան, Մոսկեսե հորիզնացու 3
 ՀՀՀՀ 02647057
 Հ/Հ 900013202016, Հ/Հ 900013574018
 ՀՀ ՀՆ աշխատակազմի գործառնական վարչություն
 ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար


 (ստորագրություն) Կ.Տ

Ա.ԱՎԱԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՐ

«Տոյոտա Երևան» ՍՊԸ
 ք. Երևան, Բայրոն 3
 ՀՀՀՀ 01557589
 Հ/Հ 1570003667300100
 «Անդրխարանկ» ՓԲԸ
 «Տոյոտա Երևան» ՍՊԸ տնօրեն:


 (ստորագրություն) Կ.Տ

Վ.ԳԶՐԱՐՅԱՆ

Կատարողի կողմից ծառայությունների մատուցման միավորի գնացուցակ

«Պրամ

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկական) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)				
		Տոյոտա Քենրի 2.4 2008թ., 2015թ.,	Տոյոտա Քենրի 3.5 2007թ.,2008թ	Տոյոտա Պրադո 4.0 2015թ.	Տոյոտա-ՌԱՎ-4 2015թ.	Տոյոտա-Կորոլա 1.3-1.6 2013թ.
1	2	7	9	10	12	13
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Տոյոտա Քենրի 2.4 2008թ., 2015թ.,	Տոյոտա Քենրի 3.5 2007թ.,2008թ	Տոյոտա Պրադո 4.0 2015թ.	Տոյոտա-ՌԱՎ-4 2015թ.	Տոյոտա-Կորոլա 1.3-1.6 2013թ.
1	Բռնկման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000
2	Կցորդման համակարգի ստուգում	5000	5000	5000	5000	5000
3	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000	5000
4	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000	5000
5	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	5000	5000	5000	5000	5000
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	Տոյոտա Քենրի 2.4 2008թ., 2015թ.,	Տոյոտա Քենրի 3.5 2007թ.,2008թ	Տոյոտա Պրադո 4.0 2015թ.	Տոյոտա-ՌԱՎ-4 2015թ.	Տոյոտա-Կորոլա 1.3-1.6 2013թ.
	1.Շարժիչ					
6	Շարժիչի հանում և տեղադրում	120000	120000	180000	120000	120000
7	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	320000	320000	480000	320000	320000
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	320000	320000	480000	320000	320000
9	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	120000	120000	250000	120000	120000
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	0	0	0	0	0
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	0	0	0	0	0
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	0	0	0	0	0
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	70000	70000	140000	70000	70000
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	180000	180000	300000	180000	180000
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	150000	150000	350000	150000	150000
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	320000	320000	480000	320000	320000
17	Ծնկաձև լիսեռի հղկում	0	0	0	0	0
18	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	320000	320000	480000	320000	320000
19	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	320000	320000	480000	320000	320000
20	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	150000	150000	350000	150000	150000
21	Ծնկաձև լիսեռի ուղղում	0	0	0	0	0
22	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	25000	25000	25000	25000	25000
23	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	120000	120000	120000	120000	90000

24	Շարժիչի բոկի փոխարինում	320000	320000	480000	320000	320000
25	Շարժիչի գլանի փոխարինում (гнзобка)	0	0	0	0	0
26	Մխոցի փոխարինում 1 հատ	320000	320000	480000	320000	320000
27	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	150000	150000	350000	150000	150000
28	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	0	0	0	0	0
30	Փոկանիվի փոխարինում	20000	20000	20000	20000	20000
31	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	0	0	0	0	0
32	Շարժիչի շղթայի փոխարինում	150000		350000	150000	150000
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	0	0	0	0	0
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	15000	15000	15000	15000	15000
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	15000	15000	15000	15000	15000
36	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	20000	20000	20000	20000	20000
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	150000		350000	150000	150000
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	0	0	0	0	0
39	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	20000	20000	20000	20000	20000
40	Յուղի ծորակի փոխարինում	0	0	0	0	0
41	Օդաքաշակ փողոկի փոխարինում	0	0	0	0	0
42	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	15000	15000	80000	15000	15000
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	120000	120000	120000	120000	90000
45	Շարժիչի կափույրի փոխարինում	-	-	-	-	-
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	-	-	-	-	-
47	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	320000	320000	480000	320000	320000
48	Մխոցային օդակների փոխարինում 1 կ- տ	320000	320000	480000	320000	320000
49	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	320000	320000	480000	320000	320000
50	Ատամնանիվի փոխարինում	-	-	-	-	-
51	Ատամնանիվի փոկի փոխարինում	-	-	-	-	-
52	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	-	-	-	-	-
53	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	150000	150000	350000	150000	150000
54	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	150000	150000	350000	150000	150000
55	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	20000	20000	20000	20000	20000
56	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
57	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	150000	150000	350000	150000	150000
58	Շարժիչի յուղի արանքաշափիչի (Քցտ) իրանի փոխարինում	0	0	0	0	0
59	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	20000	20000	70000	20000	20000
60	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	0	0	0	0	0
61	Շարժիչի գամասեղի փոխարինում	0	0	0	0	0

62	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	0	0	0	0	0
63	Գլխիկի հեղույսի փոխարինում	0	0	0	0	0
64	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	0	0	0	0	0
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	10000-400000	10000-400000	10000-400000	10000-400000	10000-400000
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	-	-	-	-	-
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ						
67	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	0	0	0	0	0
68	Ավտոմեքենայի յուղում	0	0	4000	0	0
69	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	5000	5000	5000	5000	5000
70	Յուղի ռադիատորի փոխարինում	30000	30000	30000	30000	30000
71	Յուղի ռադիատորի նորոգում	0	0	0	0	0
72	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	80000	80000	80000	80000	80000
73	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	80000	80000	80000	80000	80000
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	5000	5000	8000	5000	5000
75	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	12000	12000	7000	12000	12000
76	Օդի զտիչի փոխարինում	0	0	0	0	0
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	6000	6000	6000	6000
78	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000	6000
79	Կարբուրատորի փոխարինում կամ հանում տեղադրում	-	-	-	-	-
80	Կարբուրատորի վերանորոգում	-	-	-	-	-
81	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	30000	30000	56000	30000	30000
82	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	30000	30000	56000	30000	30000
83	Բոցամուղի կողավորում	0	0	0	0	0
84	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	30000	30000	56000	30000	30000
85	Բենզամղիչի փոխարինում	12000	12000	20000	12000	12000
86	Վառելիքի կոչտ մաքրման զտիչի փոխարինում	0	0	0	0	0
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
88	Բռնկման կարգավորում	-	-	-	-	-
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	25000	25000	25000	25000	25000
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0	0	0	0	0
91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	20000	20000	20000
92	Վառելիքի բաքի մաքրում	30000	30000	30000	30000	30000
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում	7000-35000	7000-35000	7000-35000	7000-35000	7000-35000
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	-	-	-	-	-
95	Տրամյորի վերանորոգում	-	-	-	-	-
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	15000-30000	15000-30000	15000-30000	15000-30000	15000-30000
97	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	5000-50000	5000-50000	5000-50000	5000-50000	5000-50000
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	20000	20000	20000	20000	20000
99	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	20000	20000	20000	20000	20000
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	5000-50000	5000-50000	5000-50000	5000-50000	5000-50000
101	Տվիչի փոխարինում	5000-50000	5000-50000	5000-50000	5000-50000	5000-50000
3. Սառեցման և արտածման համակարգ						

102	Հովհարի փոխարինում	10.000-50.000	10.000-50.000	10.000-50.000	10.000-50.000	10.000-50.000
103	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	10.000-50.000	10.000-50.000	10.000-50.000	10.000-50.000	10.000-50.000
104	Ուղիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	30.000	40.000	30.000	30.000	30.000
105	Ուղիատորի նորոգում	0	0	0	0	0
106	Շերտափեղկի փոխարինում	50000-120000	50000-120000	50000-120000	50000-120000	50000-120000
107	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	15000-60000	15000-60000	15000-60000	15000-60000	15000-60000
108	Ընդարձակող բաքի փոխարինում	10000	10000	10000	10000	10000
109	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	0	0	0	0	0
110	Ջրի ծորակի փոխարինում	0	0	0	0	0
111	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	0	0	0	0	0
112	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000-40000	20000-40000	20000-40000	20000-40000	20000-40000
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	80000-130000	80000-130000	80000-130000	80000-130000	80000-130000
114	Վառարանի ռադիատորի նորոգում	0	0	0	0	0
115	Վառարանի շարժիչի փոխարինում	20000-40000	20000-40000	20000-40000	20000-40000	20000-40000
116	Թերմոստատի փոխարինում	7000-20000	7000-20000	7000-20000	7000-20000	7000-20000
117	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	25000	40000-70000	25000	25000	25000
118	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	25000	40000-70000	25000	25000	25000
119	Գեներատորի փոկի փոխարինում	12000	20000	12000	12000	12000
120	Գեներատորի փոկի ձգող հուլովակի փոխարինում	17000	25000	17000	17000	17000
121	Ջրի ռադիատորի վերանորոգում	0	0	0	0	0
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում	7000-20000	7000-20000	7000-20000	7000-20000	7000-20000
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000
124	Խլարարի 1 հաստ խողովակի փոխարինում	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000
125	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	5000-10000	5000-10000	5000-10000	5000-10000	5000-10000
126	Խլարարի ներդիրի փոխարինում	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000
127	Խլարարի կախոցի փոխարինում	0	0	0	0	0
128	Հովացման հեղուկի փոխարինում	12000	12000	12000	12000	12000
4. Կցորդում և ՓՏ						
129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	60000	60000	60000	60000	60000
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	0	0	0	0	0
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
132	Կցորդման ուտմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
134	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
135	Կցորդման երկժանիի փոխարինում	0	0	0	0	0
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, մերառյալ բոլոր աշխատանքները	360000	360000	360000	360000	360000
137	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	360000	360000	360000	360000	360000
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	120000	120000	120000	120000	90000
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	0	30000	0	0	0
140	ՓՏ-ի հանում և տեղադրում	110000	110000	110000	110000	80000
141	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	360000	360000	360000	360000	360000

142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	360000	360000	360000	360000	360000
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
144	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	0	0	0	0	0
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	0	0	0	0	0
146	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	0	0	0	0	0
147	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	0	0	0	0	0
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	0	0	0	0	0
149	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	8000-18000	8000-18000	8000-18000	8000-18000	8000-18000
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	18000	18000	18000	18000	18000
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	18000	18000	18000	18000	18000
152	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	0	0	0	0	0
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ						
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	0	0	180000	0	0
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	90000	0	0
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	0	0	180000	0	0
156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0	0	0	0
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0	0	0	0
158	Բաշխիչ տուփի դիֆֆրազմաների փոխարինում	0	0	0	0	0
159	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	0	0	0	0	0
160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	0	0	0	0	0
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	0	0	0	0	0
162	Բաշխիչ տուփի երկժամի փոխարինում	0	0	0	0	0
163	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	0	0	0	0	0
164	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	0	0	0	0	0
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	0	0	0	0	0
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
169	Տվիչի փոխարինում	0	0	0	0	0
170	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	0	0	0	0	0
171	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
6. Առջևի և հետևի կամրջակներ						
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	80000-110000	0	0
173	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	0	0	120000	0	0
174	Առջևի կամրջակի կիսասոնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	20000-30000	0	0
175	Առջևի կամրջակի կիսասոնու առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
176	Առջևի կամրջակի կիսասոնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	0	20000-30000	0	0
177	Կամրջակի յուղի փոխարինում			10000	0	0

178	Առջևի կամրջակի բռունցքի գնդածև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	18000-40000	18000-40000	18000-40000	18000-40000	18000-40000
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0	0	0	0
180	Չետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	120000	0	0
181	Չետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0	0	200000	0	0
182	Չետևի կամրջակի կիսատնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	80000	0	0
183	Չետևի կամրջակի կիսատնու առանցքակալի փոխարինում	0	0	90000	0	0
184	Չետևի կամրջակի կիսատնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	0	90000	0	0
185	Չետևի կամրջակի բռունցքի գնդածև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
186	Չետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0	80000	0	0
187	Չետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	0	0	0	0	0
188	Կամրջակի տվիչի փոխարինում	0	0	10000	0	0
7. Կախոց						
189	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	80000	80000	0	80000	80000
190	Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
191	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
192	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
193	Չետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0	0
194	Չետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0
195	Անվակունդի գամասեղի և հեղուսի փոխարինում(մեկ ամիսի համար)	0	0	0	0	0
196	Ձախ կամ աջ հողակալի խտաբուկերի փոխարինում	0	0	0	0	0
197	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	16000	16000	0	16000	16000
198	Առջևի զսպանակի փոխարինում	16000	16000	16000	16000	16000
199	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	16000	16000	16000	16000	16000
200	Չարվածամեղմիչի վռանների փոխարինում	16000	16000	16000	16000	16000
201	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	18000	18000	18000	18000	18000
202	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	0	0	40000	0	0
203	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	0	0	0	0	0
204	Չարվածիչի (բարձիկի փոխարինում)	0	0	0	0	0
205	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	18000	0	0
206	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	0	0	0	0	0
207	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	0	0	0	0	0
208	Չետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	0	0	0	0	0
209	Գնդե հողակալների պատյանի փոխարինում	0	0	0	0	0
210	Գնդե հողակալների փոխարինում	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000	10000-60000
211	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000-30000	10000-30000	10000-30000	10000-30000	10000-30000
212	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	7000	7000	14000	7000	7000

213	Յետևի կախսոցի անվաքացքի կարգավորում	0	0	0	0	0
214	Յետևի կայունարարի վռաների փոխարինում	7000	7000	7000	7000	0
215	կայունարարի կալունակի փոխարինում	7000	7000	7000	7000	7000
216	Յետևի զսպանակների փոխարինում	16000	16000	16000	16000	16000
217	Յետևի ծգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000-25000	8000-25000	8000-25000	8000-25000	8000-25000
218	Յետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	8000-25000	8000-25000	8000-25000	8000-25000	8000-25000
219	Ջսպանի փոխարինում	0	0	0	0	0
220	Ջսպանի վռանների փոխարինում 1 հատ	0	0	0	0	0
221	Յետևի ցնցամեղմիչի փոխարինում	16000	16000	16000	16000	14000
222	Յետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	0	0	0	0	0
223	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1 հատ	0	0	0	0	0
8. Ղեկային մեխանիզմ						
224	Ղեկասյունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում,	60000-80000	60000-80000	60000-80000	60000-80000	60000-80000
225	Ղեկասյունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	0	0	0	0	0
226	Ղեկասյունակի (USuSվՍՈ) առանցքային սոնու փոխարինում	12000-60000	12000-60000	12000-60000	12000-60000	12000-60000
227	Ղեկասյունակի(USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	0	0	0	0	0
228	Ղեկասյունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածույի փոխարինում	60000-80000	60000-80000	60000-80000	60000-80000	60000-80000
229	Ղեկասյունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	60000-80000	60000-80000	60000-80000	60000-80000	60000-80000
230	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	10000-120000	10000-120000	10000-120000	10000-120000	10000-120000
